<p>9.7 Բեռի մի մասի վնասման կամ կորստի դեպքում Ապահովադրի, ապահովագրական հատուցման մի մասը ստանալու փոխարեն կարող է պահանջել այն ծախսերի հատուցում, որոնք պահանջվում են վնասի չափը որոշելու պահին բեռի վնասված մասերի վերականգնման կամ կորած մասերի ձեռք բերման համար: Ինչ վերաբերում է մեքենաներին և սարքավորումներին, որոնց վերականգնումը կապված է</p>	<p>9.7 В случае ущерба или потери какой-то части груза - Страхователь вместо получения страхового возмещения за эту часть может потребовать возмещение тех расходов, которые требуются для восстановления или приобретения утерянных частей в момент определения размера ущерба. Что касается машин и оборудования, восстановление которых связано со сложными технологическими</p>

<p>գործարանային պայմաններում բարդ տեխնոլոգիական գործընթացների ու բազմատեսակ բաղկացուցիչ լրամասերի առկայության հետ, տվյալ հանգամանքներում կարող են կիրառվել հատուկ պայմանավորվածության պայմաններ, որոնք կկցվեն ապահովագրության պայմանագրին: Ամբողջ բեռի կամ դրա մի մասի վնասման դեպքում հաշվարկի հիմք է ծառայում բեռի նախնական արժեքը և արժեքը վնասված վիճակում, այսինքն՝ ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է որպես անվնաս և վնասված բեռի արժեքների միջև տարբերություն: Տվյալ դեպքում հատուցման ենթակա գումարը դուրս է բերվում հետևյալ կերպ. հաշվարկվում է բեռի արժեքը կամ գործակիցը որպես վնասված վիճակում արժեքի հարաբերակցություն բեռի նախնական արժեքի նկատմամբ և բազմապատկվում է ապահովագրական գումարի բաժնետնասի վրա, որը վավեր է բեռի նախնական արժեքի համար (այսինքն, առանց բեռի փոխադրման ծախսերի՝ մինչ բեռի ստացումը և վերջնական բեռնափոխադրման գումարների վճարումը):</p>	<p>процессами и различными дополнительными запасными частями в заводских условиях, то в данном случае могут быть применены условия особого соглашения, которые будут приложены к договору страхования. При ущербе всего груза или его части основой расчета является начальная стоимость груза и стоимость поврежденного груза, то есть: размер страхового возмещения рассчитывается как разница стоимостей неповрежденного и поврежденного груза. В данном случае сумма, подлежащая возмещению определяется следующим образом: рассчитывается коэффициент обесценения груза как отношение стоимости поврежденного груза к стоимости неповрежденного груза и умножается на часть страховой суммы, которая действительна для первоначальной стоимости груза (то есть без расходов на перевозку: до получения груза и выплаты окончательных сумм грузоперевозок).</p>
<p>9.8 Բեռնափոխադրման միջոցները համարվում են անհետ կորած, եթե դրանց պլանավորված ժամանումից անցել է 60 օր և վնասների հատուցման վերաբերյալ հայցային դիմում լրացնելու պահին դրանց մասին որևէ տեղեկատվություն չի ստացվել: Այն դեպքերում, երբ տեղեկատվության ստացումը կարող է հապաղել պատերազմի, ռազմական գործողությունների բնույթ կրող իրադարձությունների, քաղաքացիական պատերազմի կամ հասարակական խռովությունների պատճառով, ապա այն ժամանակը, որից սկսած ենթադրվում է, որ բեռը կորել է, երկարաձգվում է հանգամանքներին համապատասխան՝ ընդ որում չգերազանցելով 6 ամիսը:</p>	<p>9.8 Средства грузоперевозок считаются бесследно исчезнувшими, если после их запланированной презда прошло 60 дней и в момент заполнения заявления о возмещении никакой информации по ним не было получено. В случаях, когда неполучение сведений может быть связан с войной, происшествиями носящими характер военных действий, гражданской войной или общественными волнениями, то время, с начала которого считается, что груз был потерян продлевается на соответствующий длительности происшествий срок, но не более 6 месяцев.</p>
<p>9.9 Ավիատեղափոխումների դեպքում բեռը կորած է համարվում տեղափոխման ժամանակ, եթե այն չի հայտնաբերվել հետախուզմամբ 90 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, որը հաջորդում է օրվան, երբ բեռը պետք է մատակարարված լիներ նշանակման կետ օդանավակայանում:</p>	<p>9.9 При авиaperевозках груз считается потеряннм во время перевозки, если он не был найден расследованием в течение 90 дней, начиная со дня, который следует за днем, когда груз должен был быть доставлен в пункт назначения в аэропорту.</p>
<p>9.10 Եթե բեռների ապահովագրության պայմանագիրը նախատեսում է բեռի տեղափոխումը (պահպանումը) խմբաբանակներով (մաս-մաս), ընդ որում ապահովագրական պայմանագրում ապահովագրական գումարը սահմանված է ամբողջ բեռի հաշվարկով, ապա Ապահովագրողի պատասխանատվության չափը բեռի յուրաքանչյուր խմբաբանակի (մասի) համար հավասար է այն ապահովագրական գումարի մասին, որը համարժեք է բեռի տվյալ խմբաբանակին (մասին)՝ ելնելով դրա արժեքի մեծությունից բեռի ընդհանուր իրական արժեքի նկատմամբ: Այն դեպքում, երբ փոխադրվող (պահպանվող) բեռի իրական արժեքը գերազանցում է ապահովագրական գումարը, ապա Ապահովագրողի պատասխանատվության չափը որոշվում է փոխադրվող (պահպանվող) բեռի իրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի հարաբերակցությանը համամասնորեն: Ընդ որում, վնասների հատուցումը կատարվում է վնասի լրիվ չափի համապատասխան մասով:</p>	<p>9.10 Если договор страхования грузов предусматривает перевозку (хранение) груза партиями (частями), при том страховая сумма по договору страхования установлена из расчета всего груза, то размер ответственности Страховщика за каждую партию (часть) груза равна той части страховой суммы, которая равноценна данной партии (части) груза, исходя из отношения стоимости данной партии к реальной стоимости всего груза. В случае, если реальная стоимость перевозимого (хранимого) груза превышает страховую сумму, то размер ответственности Страховщика устанавливается пропорционально отношению страховой суммы к реальной стоимости перевозимого (хранимого) груза. При этом, возмещение ущерба производится в части, соответствующему полному размеру ущерба.</p>

<p>9.11 Եթե բեռը ստանալու ժամանակ ստացողը/Ապահովադիրը գրավոր չի հայտնել տեղափոխողին բեռի պակասորդի կամ վնասվածքի մասին, ապա համարվում է, որ նա պատշաճ ձևով ստացել է բեռը՝ բեռնափոխադրման պայմանագրի պայմաններին համապատասխան (կոնոսամենտ /տրանսպորտային բեռնագիր/, ապրանքատրանսպորտային կամ երկաթուղային բեռնագրեր և այլն): Եթե բեռի պակասորդը կամ վնասը չի կարող հայտնաբերվել բեռը սովորական եղանակով ստանալու ժամանակ, տեղափոխողին ուղղված դիմումը պետք է ներկայացվի համապատասխան տրանսպորտի տեսակով հաստատված տեղափոխման որոշակի կանոնների ժամանակահատվածում: Եթե բեռը ստացողը տեղափոխողին չներկայացնի այդպիսի դիմում սահմանված ժամկետում, ապա դա կարող է հիմք հանդիսանալ Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը վճարելուց հրաժարվելու համար:</p>	<p>9.11 Если во время приемки груза получатель/Страхователь письменно не оповестил перевозчику о недостатке или повреждения груза, то считается, что он получил груз в должном виде в соответствии с договором грузоперевозок (коносамент/транспортная накладная/, железнодорожная или грузотранспортная накладная и т.д.). Если недостача или повреждение груза не могут быть выявлены при приемки груза обычным способом, то претензия к перевозчику должны быть представлена в течение соответствующих сроков, установленных для отдельных видов транспорта. Если получатель груза не представит перевозчику такое заявление в установленные сроки, то это может служить основанием для Страховщика для отказа в уплате страхового возмещения.</p>
<p>9.12 Եթե բեռն ապահովագրված է մի քանի Ապահովագրողների մոտ, որոնց ընդհանուր ապահովագրական գումարը գերազանցում է դրա արժեքը, ապա բոլոր Ապահովագրողները պատասխանատվություն են կրում միայն տվյալ բեռի իրական արժեքի սահմաններում, ընդ որում, նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է այն ապահովագրական գումարին համամասնորեն, ըստ որի նա կնքել է ապահովագրության պայմանագիրը:</p>	<p>9.12 Если груз застрахован у нескольких Страховщиков, общая страховая сумма которых превышает его стоимость, то все Страховщики несут ответственность только в пределах реальной стоимости груза, при этом каждый из Страховщиков несет ответственность пропорционально страховой сумме, по которой был заключен договор страхования.</p>
<p>9.13. Այն դեպքում, երբ սույն ապահովագրությամբ ծածկված ռիսկի տեղի ունենալու հետևանքով ապահովագրված տարանցիկ բեռնափոխադրումն ավարտվում է ապահովագրությամբ չնախատեսված նավահանգստում կամ վայրում, Ապահովագրողը պետք է Ապահովադիրին հատուցի բոլոր այն ողջամիտ և պատշաճ կարգով կատարվա լրացուցիչ ծախսերը, որոնք կապված են ապահովագրության առարկայի բեռնաթափման, պահեստավորման և սույն ապահովագրությամբ նախատեսված վերջնակետ առաքելու հետ:</p>	<p>9.13. В случае, если в результате наступления риска, покрываемого настоящим страхованием застрахованная сквозная перевозка заканчивается в порту или пункте, не предусмотренного договором страхования, Страховщик должен возместить Страхователю все благоразумные и должным образом понесенные дополнительные расходы, которые связаны с разгрузкой, складированием и доставкой в пункт назначения, предусмотренного по настоящему договору страхования.</p>
<p>9.14 9.1-9.12 կետերը, որոնք չեն կիրառվում ընդհանուր վթարային և գույքի փրկման հետ կապված ծախսերի նկատմամբ, ենթակա է վերն ամրագրված Բացառությունների 5.1; 5.2; 5.3 և 5.4 հոդվածներով սահմանված բացառություններին և չի ներառում Ապահովադիրի կամ նրա աշխատակիցների մեղքով, անփութության, անվճարունակության կամ ֆինանսական խախտման հետևանքով առաջացած ծախսերը:</p>	<p>9.14 пп 9.1-9.12, которые не применяется к расходам общей аварии и спасения имущества, подчиняется к исключениям, указанным в пп. 5.1; 5.2; 5.3; и 5.4 раздела Исключения и не включает расходы, понесенные по вине Страхователя, его работников, в результате небрежности, неплатежеспособности или финансовых нарушений.</p>
<p>9.15 Սույն ապահովագրությունը չի հատուցում ապահովագրության օբյեկտի «Կոնստրուկտիվ Լրիվ Կորստի» առնչությամբ ներկայացված որևէ պահանջ/հայտ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրության օբյեկտը լքվել է դրա փաստացի, լրիվ և անխուսափելի կորստի պատճառով կամ, երբ ապահովագրության օբյեկտի վերականգնման, վերանորոգման և ապահովագրությամբ նախատեսված վերջնակետ առաքելու ծախսերը գերազանցում են բեռի արժեքը՝ դրա տեղ հասնելու պահին:</p>	<p>9.15.Настоящее страхование не возмещает любое требование / заявление касательно “Полной конструктивной утери” объекта страхования, за исключением случаев, когда объект страхования был оставлен в связи с его фактической, полной и неизбежной потери или когда расходы восстановления, ремонта и его доставки в предусмотренный договором страхования пункт назначения превышают стоимость объекта страхования в момент доставки.</p>
<p>9.16 Ապահովադիրի կողմից սույնով ապահովագրված բեռի ավելացած (լրացուցիչ) արժեքի Ապահովագրության դեպքում, փոխադրվող բեռի</p>	<p>9.16 При страховании Страхователем добавленной стоимости застрахованного настоящим страхованием груза, согласованная стоимость</p>

<p>համաձայնեցված արժեքը համարվում է ավելացած՝ սույն ապահովագրությամբ ապահովագրված ամբողջ գումարի չափով, իսկ ավելացած արժեքի բոլոր ապահովագրությունները բաշխվում են սույնով ապահովագրված կորստի և պարտավորության միջև նույն համամասնությամբ, ինչ որ սույնով ապահովագրված գումարն է այդ ընդհանուր գումարի նկատմամբ: Պահանջի/հայտի ներկայացման դեպքում, Ապահովադիրը պետք է Ապահովագրողին տրամադրի բոլոր այլ ապահովագրություններով ապահովագրված գումարների վերաբերյալ ապացույցներ:</p>	<p>перевозимого груза будет считаться добавленным в размере всей страховой суммы по настоящему договору страхования, а все страхования добавленной стоимости, которые покрывают потери и ответственность по настоящему страхованию распределяются пропорционально отношению страховой суммы по настоящему договору страхования к общей страховой сумме. При претензии/ заявлении на возмещение, Страхователь должен предоставить Страховщику все доказательства страховых сумм по другим договорам страхования.</p>
<p>9.17 Բոլոր անհարաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում “ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ” ԱՓԲԸ հայտի կարգավորման մասին որոշում է ընդունում, կազմելով այդ մասին համապատասխան եզրակացություն: Հատուցման վճարումը կատարվում է հայտի կարգավորման վերաբերյալ որոշման/եզրակացության ընդունման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:</p>	<p>9.17 В течение 15 дней после получения всех необходимых документов, СЗАО “ИНГО АРМЕНИЯ” принимает решение о регулировании заявления на возмещения, составляя соответствующее заключение об этом. Оплата возмещения производится в течение 15 дней со дня принятия решения/заключения о возмещении.</p>
<p>9.17.1 Հատուցման վճարումը կարող է կատարվել միանվագ կամ մաս-մաս:</p>	<p>9.17.1 Оплата возмещения может быть произведена как единовременно так и по частям.</p>
<p>9.17.2 Մինչ բոլոր փաստաթղթերի ստանալը, ըստ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ որոշման և Ապահովադրի խնդրանքով, կարող է իրականացվել ապահովագրական հատուցման մասնակի վճարում՝ կանխավճարի տեսքով: Տվյալ դեպքում կազմվում է միջանկյալ ապահովագրական հավաստագիր: Միջանկյալ հավաստագիրը կազմվում է հայտի վերաբերյալ տվյալ պահին հայտնի տեղեկությունների և առկա փաստաթղթերի հիման վրա: Բոլոր անհարաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո, ապահովագրական հատուցումը կվճարվի ամբողջությամբ՝ վերջնական ապահովագրական հավաստագիր կազմելու եղանակով:</p>	<p>9.17.2 До получения всех необходимых документов, по решению СЗАО “ИНГО АРМЕНИЯ” и по просьбе Страхователя может быть произведено частичное страховое возмещение, в качестве аванса. В данном случае составляется промежуточное страховое свидетельство. Промежуточное свидетельство составляется на основании известных сведений и документов на момент его составления. После получения всех необходимых документов страховое возмещение будет уплачено полностью, посредством составления окончательного страхового свидетельства.</p>
<p>10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՈՒՅՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ</p>	<p>10. ОСНОВАНИЯ ДЛЯ ОТКАЗА В ВЫПЛАТЕ СТРАХОВОГО ВОЗМЕЩЕНИЯ</p>
<p>10.1 Ապահովագրողն իրավունք ունի լրիվ կամ մասնակի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե.</p>	<p>10.1 Страховщик имеет право частично или полностью, отказать в выплате страхового возмещения, если:</p>
<p>10.1.1 Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը ապահովագրական պայմանագրով սահմանված ժամկետներում;</p>	<p>10.1.1 Страхователь не заплатил страховую премию в установленные договором страхования сроки;</p>
<p>10.1.2 ապահովագրական պատահարը դարձել է Ապահովադրի (Շահառուի) կանխատեսված գործողությունների հետևանք, կամ այն գործողությունների հետևանք, որոնցում մախաբնական մարմինների կամ դատարանի կողմից հաստատվել են կանխատեսված հանցագործության հատկանիշներ;</p>	<p>10.1.2 страховой случай является следствием умышленных действий Страхователя (Выгодоприобретателя), или следствием таких действий, в которых присутствуют признаки умышленных действий по установлению органов предварительного расследования или суда;</p>
<p>10.1.3 երրորդ անձանց կողմից բեռի հափշտակման, ինչպես նաև հակաիրավական ոչնչացման կամ վնասման փաստի մասին Ապահովադիրը կամ Շահառուն կամ Բեռնափոխադրողը չի հաղորդել համապատասխան իրավապահ մարմիններին և եթե այդ փաստը վերոնշյալ մարմինների կողմից չի հաստատվել;</p>	<p>10.1.3 Страхователь, Выгодоприобретатель или грузоперевозчик не сообщил в уполномоченные правоохранительные органы о факте захвата, противоправного уничтожения или нанесения ущерба грузу третьими лицами, или если этот факт не был подтвержден вышеназванными органами;</p>
<p>10.1.4 Ապահովադիրը, համաձայն ապահովագրության վերաբերյալ դիմումի, հաղորդել է սխալ տեղեկություններ այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական ռիսկի մեկնաբանության համար կամ չի տրամադրել</p>	<p>10.1.4 Страхователь сообщил ложные сведения в заявлении о страховании об обстоятельствах, которые имеют существенное значение для определения страхуемого риска, или если предоставленные сведения неполные;</p>

<p>ամբողջական տեղեկություն;</p> <p>10.1.5 Ապահովադիրը չի իրազեկել Ապահովագրողին նիսկում էական փոփոխությունների մասին 48 ժամվա ընթացքում՝ սկսած դրանց մասին հայտնի դառնալու պահից, այն է՝ երթուղու, բեռնափոխադրողի, ապահովագրված բեռի փաթեթավորման փոփոխությունը; բեռի արժեքի բարձրացումը, բեռի բնույթի մասնակի փոփոխությունը;</p>	<p>10.1.5 Страхователь не сообщил Страховщику о существенных изменениях в течение 48 часов, начиная с момента, когда это стало им известно, в т.ч. изменения маршрута, перевозчика, упаковки страховемого груза, увеличение стоимости груза, частичное изменение свойств груза;</p>
<p>10.1.6 հնարավորության դեպքում Ապահովադիրը կամ Շահառուն չի ձեռնարկել բեռը փրկելու և պահպանելու միջոցառումներ և չի տեղեկացրել ապահովագրական պատահարի մասին «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ին կամ նրա ներկայացուցչին:</p>	<p>10.1.6 Страхователь или Выгодоприобретатель не предпринял возможных мер для спасения и сохранения груза и не сообщил СЗАО “ИНГО АРМЕНИЯ” или его представителю о наступлении страхового случая.</p>
<p>10.2 Պայմանագիրը, ըստ որի վճարվել է ապահովագրական հատուցումը, ուժի մեջ է մինչ պայմանագրում ներկայացված ժամկետի ավարտը՝ նշված ապահովագրական գումարի և կատարված ապահովագրական հատուցման տարբերության չափով: Ապահովագրական գումարի փոքրացումը կատարվում է ապահովագրական պատահարի ամսաթվից:</p>	<p>10.2 Договор, по которому было выплачено страховое возмещение, действует до указанного в договоре срока действия в размере разницы указанной страховой суммы и выплаченного страхового возмещения. Сокращение страховой суммы осуществляется с даты наступления страхового случая.</p>
<p>10.3 Եթե վնասը մասնակի հատուցվում է այն առաջացնելու մեջ մեղավոր անձանց կողմից, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է այն գումարի տարբերությամբ, որը ստացել է Ապահովադիրը մեղավոր անձից: Ապահովագրողն իրավունք ունի տարժամկետել ապահովագրական հատուցման վճարումը, եթե համապատասխան իրավասու մարմինների կողմից հարուցվել է քրեական գործ Ապահովադիրի, Շահառուի կամ նրանց ներկայացուցիչների դեմ՝ տվյալ ապահովագրական պատահարի կապակցությամբ կամ կատարվում է վնասների առաջացմանը հանգեցնող հանգամանքների հետաքննություն՝ մինչև քննության ավարտը:</p>	<p>10.3 Если ущерб частично возмещается лицами, виновными за ее причинение, то страховое возмещение выплачивается вычитая сумму полученной Страхователем возмещения от виновной стороны. Страховщик имеет право отсрочить выплату страхового возмещения, если соответствующими уполномоченными органами было возбуждено уголовное дело против Страхователя, Выгодоприобретателя или их представителей по настоящему страховому случаю, а в случае, если производится расследование обстоятельств возникновения ущерба – до окончания расследования.</p>
<p>11. ԱՔԱՆԴՈՆ (ԱՊԱՀՈՎԱԳՐԻ ԿԱՄ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԲԵՌԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՀՐԱՄԱՐՎԵԼԸ)</p>	<p>11. ОТКАЗ (ОТКАЗ СТРАХОВАТЕЛЯ ИЛИ ВЫГОДОПРИБРЕТАТЕЛЯ ОТ ПРАВ НА ЗАСТРАХОВАННЫЙ ГРУЗ)</p>
<p>11.1 Ապահովագրողն իրավունք ունի, բայց պարտավոր չէ վճարել ամբողջ ապահովագրական գումարը Ապահովադիրի կողմից ապահովագրված բեռի իր իրավունքներից հրաժարվելու (աբանդոն) պայմաններում՝ հետևյալ դեպքերում. բեռի՝ բեռնափոխադրման միջոցների հետ մեկտեղ կորուստ; բեռի լրիվ փչացում; վնասների շտկման տնտեսական աննպատակահարմարության կամ ապահովագրված բեռը նշանակման կետ հասցնելու դեպքում, եթե դրանց արժեքի վերականգնումը գերազանցում է ապահովագրական գումարի 75%-ը; ազգային հուզումների կամ ահաբեկչական ակտերի հետևանքով բեռի հափշտակման դեպքում, եթե բեռն ապահովագրված է այդպիսի ռիսկերից և հափշտակումը տևում է 60 օրից ավելի: Աբանդոնի վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվի Ապահովագրողին 6 ամսվա ընթացքում՝ սկսած նշված հանգամանքների մեկնարկման պահից: Աբանդոնի վերաբերյալ դիմումը չի կարող ետ վերադարձվել: Եթե ապահովագրական հատուցումը ստանալուց հետո պարզվի, որ բեռը վնասված չէ, ապա Ապահովագրողը կարող է պահանջել, որպեսզի Ապահովադիրը (Շահառուն), իրեն թողնելով բեռը, վերադարձնի ապահովագրական հատուցումը՝ մասնակի վնասի</p>	<p>11.1 Страховщик имеет право, но не обязуется выплатить полную страховую сумму в случае отказа Страхователем от прав на застрахованный груз в следующих случаях: утеря груза вместе с транспортным средством; полное конструктивное уничтожение (утеря) груза; экономическая бессмысленность исправления ущерба или доставки груза в пункт назначения, если стоимость восстановления груза превышает 75% от страховой суммы; задержание груза в результате народных волнений, террористических актов, если груз застрахован от таких рисков и задержание длится более 60 дней. Заявление об отказе должно быть представлено Страховщику в течение 6 месяцев, начиная с момента начала вышеуказанных обстоятельств. Заявление об отказе не может быть отозвано. Если после получения страхового возмещения выяснится, что груз не был поврежден, то Страховщик может потребовать, чтобы Страхователь (Выгодоприобретатель), оставляя себе груз возвратил страховое возмещения за вычетом возмещения за частичный ущерб, если он имел место. Переход прав на застрахованный груз от Страхователя к Страховщику не освобождает Страхователя (Выгодоприобретателя) или грузоперевозчика от своих обязанностей</p>

<p>հատուցման տարբերությամբ, եթե այդպիսին եղել է: Ապահովագրված բեռի նկատմամբ իրավունքների անցումը Ապահովագրողին չի ազատում Ապահովադիրին (Շահառուին) կամ Բեռնափոխադրողին իր պարտավորություններից՝ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցառումները՝ վնասները և կորուստները նվազագույնի հասցնելու ուղղությամբ:</p>	<p>предпринять все возможные меры для минимизации убытков (ущерба).</p>
<p align="center">12. ՀԵՏՊԱՀԱՆՁ</p>	<p align="center">12. СУБРОГАЦИЯ</p>
<p>12.1 Ապահովագրական հատուցումը վճարելուց հետո, Ապահովագրողին վճարված գումարի սահմաններում անցնում են բոլոր այն պահանջների իրավունքները, որոնք ունի Ապահովադիրը կամ Շահառուն երրորդ անձանց նկատմամբ: Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր են ապահովագրական հատուցում ստանալիս Ապահովագրողին փոխանցել իրենց ունեցած բոլոր փաստաթղթերն ու ապացույցները և կատարել հետպահանջի իրավունքն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր ձևակերպումները:</p>	<p>12.1 После выплаты страхового возмещения Страховщику в пределах возмещенной суммы переходят все те права требования, которые есть у Страхователя или Выгодоприобретателя по отношению третьим лицам. Страхователь или Выгодоприобретатель обязаны при получении страхового возмещения передать Страховщику все имеющиеся у них документы и доказательства и совершать все оформления для реализации права на суброгацию.</p>
<p>12.2 Եթե Ապահովադիրը կամ Շահառուն հրաժարվեն այդպիսի իրավունքներից կամ պարզվի, որ հետպահանջի իրականացումը անհնարին է իրենց իսկ մեղքով (վնասի հարցում մեղավոր անձանց հայցային դիմում ներկայացնելու ժամկետների բացթողում և այլն), Ապահովագրողը համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ արդեն կատարված վճարի դեպքում Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր են վերադարձնել Ապահովագրողին ստացված ապահովագրական հատուցումն ու դրա տոկոսները, որոնք հաշվեգրվել են ապահովագրական հատուցումը ստանալու օրվանից՝ օրենսդրությամբ սահմանված դրույթաչափերի շրջանակներում:</p>	<p>12.2 Если Страхователь или Выгодоприобретатель откажутся от таких прав, или если выяснится, что осуществление права суброгации невозможно по их же вине (несоблюдение сроков предъявления требования на возмещение виновной стороне и т.д.), то Страховщик освобождается от обязательства выплаты страхового возмещения в соответствующей части, а при уже осуществленной страховой выплате Страхователь или Выгодоприобретатель обязаны возратить Страховщику полученное страховое возмещение и его проценты, установленные в рамках действующего законодательства, которые были начислены со дня получения страхового возмещения.</p>
<p align="center">13. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ</p>	<p align="center">13. ИЗМЕНЕНИЕ УСЛОВИЙ И ДОСРОЧНОЕ РАСТОРЖЕНИЕ ДОГОВОРА СТРАХОВАНИЯ</p>
<p>13.1 Ապահովադիրը կարող է չեղյալ համարել Ապահովագրության պայմանագիրը՝ ցանկացած ժամանակ, Ապահովագրողին 5 օր առաջ գրավոր ծանուցելով այդ մասին: Ապահովագրական պայմանագիրը կարող է դադարեցվել նաև Ապահովագրողի կողմից օրենքով սահմանված կարգով: Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:</p>	<p>13.1 Страхователь может признать договор страхования недействительным в любой момент, за 5 дней письменно оповестив Страховщика об этом. Договор страхования может быть также расторгнут Страховщиком в порядке, установленной законодательством. Договор страхования может быть изменен или дополнен только по письменному согласию Сторон.</p>
<p align="center">14. ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍՆԱՍԵԼԻՈՒԹՅՈՒՆ</p>	<p align="center">14. ДЕЛИМОСТЬ ПОЛОЖЕНИЙ</p>
<p>14.1 Եթե Վկայագրի որևէ դրույթ ճանաչվում է անվավեր կամ դառնում է անգործադրելի, ապա այն պետք է վերանայվի համապատասխան օրենքների եւ նորմերի սահմաններում: Կողմերի մտադրությունը վերականգնելու, և այդպիսի անվավերությունը կամ անգործադրելիությունը չի ազդում Պայմանագրի որևէ այլ դրույթի վավերականության կամ գործադրելիության վրա: Կողմերը չեն շահարկի Պայմանագրի որևէ դրույթի անգործադրելիությունը Պայմանագրով սահմանված իրենց պարտավորություններից խուսափելու համար:</p>	<p>14.1 Если какое-нибудь положение настоящего договора признается недействительным или теряет свою силу, то оно должно быть пересмотрено в рамках соответствующего законодательство и норм для востановления намерений Сторон, а остальная часть договора остается в силе. Стороны не могут использовать утерю силы (недействительность) какого-либо положения для избежания осуществления своих обязанностей, установленных договором.</p>
<p align="center">15. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵՁՈՒՆ</p>	<p align="center">15. ЯЗЫК ДОГОВОРА</p>
<p>15.1 Պայմանագիրը կնքվում է հայերեն և անգլերեն լեզուներով՝ երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրը ստանում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի հայերեն և անգլերեն տեքստերի միջև անհամապատասխանությունների առկայության դեպքում, նախապատվությունը տրվում է հայերեն</p>	<p>15.1 Договор страхования заключается на армянском и русском языках в двух экземплярах. Каждая из Сторон получает один экземпляр договора. При несоответствии в армянском и русском текстах, предпочтение дается армянскому варианту текста.</p>

օրինակին:	
16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՃՄԱՆ ՎԱՐԳԸ	16. ПОРЯДОК РАЗРЕШЕНИЯ СПОРОВ
16.1 Ապահովագրության պայմանագրից ծագող բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ փոխադարձ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:	16.1 Любые споры, возникшие по договору страхования регулируются посредством переговоров, а при недостижении взаимного согласия – в порядке, установленном законодательством РА.